

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2021թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԿԱՆԴ ՂԱԶԱՆԶՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ
ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի և ՀՀ ժողովրդական արտիստ, դերասանուհի Գայյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի (Վ. Սարգսյան փողոց հ.7) ճակատային մասում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐՎԱՆԴ ԴԱԶԱՆՉՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻ ՀԻՇՍԱՄԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանը ծնվել է 1937 թվականի հունիսի 2-ին, Երևանում:

1949-1952 թվականներին աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ որպես սկանակ դերասան: 1953-1958 թվականներին սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի Վարդան Աճեմյանի կուրսում՝ դրամատիկ թատրոնի դերասանի որակավորմամբ: 1958-1962 թվականներին աշխատել է Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետական թատրոնում՝ որպես դերասան և ռեժիսոր, իսկ 1962-1965 թվականներին սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական բաժնում՝ ստանալով դրամատիկ թատրոնի ռեժիսորի որակավորում: 1974 թվականից դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1967-1970 թվականներին աշխատել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես ռեժիսոր, 1984-1986 թվականներին՝ որպես տնօրեն և գեղարվեստական խորհրդի նախագահ, 1970-1976 թվականներին՝ Լենինականի պետական թատրոնում որպես գլխավոր ռեժիսոր:

1976-1978 թվականներին աշխատել է Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես գեղարվեստական ղեկավար և տնօրեն: 1980-1984 և 1986-1993 թվականներին՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ որպես գլխավոր ռեժիսոր: 1993 թվականից եղել է Երևանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավարը, 1993-2002 թվականներին՝ տնօրենը:

1995-2007 թվականներին եղել է Հայաստանի թատերական գործիչների միության նախագահը:

Արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի (1974), պրոֆեսորի (1991), ՀՀ ժողովրդական արտիստի (2004), «Երևանի պատվավոր քաղաքացի» (2005), «Գյումրու պատվավոր քաղաքացի» (2015) կոչումներին: Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (2012), շքանշանով (2017) և այլն:

Երվանդ Ղազանչյանը մահացել է 2019 թվականին, Երևանում:

ՀՀ ժողովրդական արտիստ, դերասանուհի Գայյա Նովենցը ծնվել է 1937 թվականի հուլիսի 10-ին, Երևանում:

1958 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1958-1961 թվականներին եղել է Կապանի, 1971-1977 թվականներին՝ Գյումրիի, 1977-1983 թվականներին՝ Երևանի դրամատիկական թատրոնի, 1961-1971 թվականներին և 1983-1993 թվականներին՝ Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, 1993 թվականից՝ Համազգային թատրոնների դերասանուհի:

2007 թվականին արժանացել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը:

Խաղացել է մոտ 25 ֆիլմերում («Մենք ենք, մեր սարերը», «Կտոր մը երկինք», «Նահապետ», «Հին օրերի երգը», «Կարոտ», «Ճերմակ անուրջներ», «Գիքոր» և այլն):

Գայյա Նովենցը եղել է ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանյանի կինը: Մահացել է 2012 թվականին:

ՀՀ ժողովրդական արտիստներ Երվանդ Ղազանյանի և Գայյա Նովենցի հիշատակները հավերժացնող միասնական հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի (Վ. Սարգսյան փողոց հ.7) ճակատային մասում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ. Շահբազյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐՎԱՆԴ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երվանդ Ղազանյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐՎԱՆԴ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երվանդ Ղազանյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ